

Սիրանուշ Գ. Հովհաննիսյան

## ԼԵԶՎԱԿԱՆ ՆՇԱՆՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆ ՀՈՄԱՆԻՇԸ\*

Who plead for love, and look for recompense,  
More than that tongue that more hath more expressed.  
O learn to read what silent love hath writ:  
To hear with eyes belongs to love's fine wit.

W. Shakespeare<sup>1</sup>

Я близ тебя стоял смущенный,  
Томимый трепетом любви.  
Уста от полноты дыхания  
Остались немые и робки,  
—А сердце жаждало признанья,  
Рука – пожатия руки.

Н. Огарев<sup>2</sup>

**Բանալի բառեր** – լեզվական նշան, նշանակիչ, օբյեկտիվ իրականություն, ներաշխարհի, զգացող անհատ, լրություն, սպիտակ գույն:

**Անընդհատ ընդլայնվելու ներունակ նշանային միակ համակարգը՝ լեզուն, համարվում է մարդկային մտահոգևոր գործընթացների և գործունեության հրապարակման լավագույն ձևը:**

Շոշափելի, նյութական իրերի աշխարհը այն է, ինչ տրված է մարդուն որպես գոյության միջավայր: Մարդը, սակայն, ֆիզիկական, հոգեբանական, մտավոր էակ է, որի համար իրեն շրջապատող աշխարհի գուտ ճանաչումը դեռ չի նշանակում մարդանալ: Մարդանալու գործընթացը հիմնված է ոչ միայն այդ ճանաչածը իրեն հարմարեցնելու, վերափոխելու, այլ կերպ ասած՝ նպատակադրված կառուցելու ունակության ու պատրաստակամության վրա. մարդացման գործընթացի հիմքը մտածելու կարողությունն է, իսկ այդ գործընթացի որակի հիմքը մարդու զգալու կարողու-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.02.2014:

1 Shakespeare W. The Sonnets. Cambridge, 2008, p. 14.

2 Огарев Н. Избранные стихотворения. М., 1988, с. 32.

թյունն է:

Մարդը եռակի գոյություն ունի, և այդ գոյություններից յուրաքանչյուրը նրան ապրեցնում է երեք տարբեր, բայց միմյանց հետ փոխկապակցված միջավայրերում. **Ֆիզիկական մարդը** զուտ ճանաչում է իրեն տրված շոշափելի աշխարհը, **հոգեբանական մարդը** զգում է այդ աշխարհը, իսկ **մտավոր մարդը** հարմարվում է այդ աշխարհին կամ աշխարհն է հարմարեցնում իրեն: Մարդու երեք գոյությունները միաձույլ ու միասեռ են, և այդ գոյությունները «ո՛չ հնարավոր է նույնացնել, ո՛չ փոխարինել մեկը մյուսով, ո՛չ կտրել մեկը մյուսից»<sup>3</sup>: Սրանցից որևէ մեկի բացակայության կամ թերիության դեպքում մարդը լիարժեք, առողջ արարած չի համարվում: Այլ կերպ ասած՝ մարդը մարդ է այն ժամանակ, երբ «հաջողվում է սեփական ուժերով իրեն տեղավորել իր իսկ մտքերի, ձգտումների մեջ»<sup>4</sup>: Այս գոյությունները մարդ արարածի մեջ որպես նախատրամադրվածություն ի բնե կան և նորմալ զարգացման դեպքում հաջորդաբար ու պարտադրաբար ի հայտ են գալիս՝ տարբեր անհատների մեջ գուցե մեկը մյուսին զիջելով:

Մարդն առաջին հերթին ֆիզիկական գոյություն է ապրում. ծնվում ու պարզապես ճանաչում է շրջակա միջավայրը, ապա՝ զգում, հետո՝ մտածում: Ընդ որում զգացող գոյությունը կամ հոգեբանական մարդը կրկնակի դրսևորում ունի՝ մեկ որպես ֆիզիկական գոյության անմիջական հաջորդում, մեկ էլ՝ մտածող գոյության զուգահեռ կամ հաջորդ: Զգացող առաջին գոյությունը անվանում է այն, ինչը ճանաչվել է ֆիզիկական գոյության շնորհիվ, իսկ երկրորդը մտածող գոյության ամբարած նյութի վերլուծության ու այդ ամբարվածի ճանաչման փորձերի միասնությունն է: Այն ամենը, ինչ մարդը հավաքում է արտաքին նյութերն աշխարհից զգայարանների միջոցով, նախ իր մեջ գոյություն է ստանում որպես զուտ գիտելիք աշխարհի մասին, իսկ այն ամենը, ինչ զգացող գոյության շնորհիվ է առաջանում մարդու մեջ, գոյություն է ստանում որպես հոգևոր-հոգեկան նյութ. այն չի տրամաբանվում, չի մտածվում: Ըստ էության և՛ զգացող գոյության ամբարածը, և՛ ֆիզիկապես ընկալվածն ու մտածվածը քանի դեռ մարդը չի օտարում որևէ ձևով, աննյութ են, մարդուց ներս: Այդ ամբողջ ոչ նյութական աշխարհը մարդուց դուրս գոյություն չունի<sup>5</sup>:

Որպես մարդկային գոյության անխուսափելի ուղեկից՝ անհիշելի ժամանակներից հայտնի է մարդկային լեզուն: Լեզուն կրկնակի նշանային համակարգ է: Լեզվական միավորների ամբողջությունը նշանայնությամբ կրկնակիանում է՝ կախված մարդկային նշված գոյություններից երկուսից. ֆիզիկական գոյությունը ուսումնասիրում և անվանում է շրջապատող աշխարհը՝ առաջին հերթին այդ աշխարհի բաղկացուցիչ տարրերին անվանումներ տալու միջոցով: Անվանումը լրացնում է լեզվանշանային համակարգի բառայնից մինչև տեքստային մակարդակները: Ցանկացած իրն անվանող հնչյունը բառ է՝ անվանում, ցանկացած միտք օտարող ցանկա-


3 Дубинин Н. Что такое человек. М., 1983, с. 115.

4 Мамардашвили М. Проблема человека в философии: О человеческом в человеке. М., 1991, с. 17.

5 Տե՛ս **Բերկլի Զ.**, Տրակտատ մարդկային ինացության սկզբունքների վերաբերյալ, Եր., 2002, էջ 24:

ցած արտահայտություն՝ բառակապակցությունից մինչև տեքստ, տվյալ մտքի անվանումն է, նրա նշանակիչը: Զգացող գոյությունը փորձում է ընդհանրապես մարդու մեջ հավաքված չոր տեղեկատվությունը խմորել ու ինչ-որ բան ստանալ: Այդ խմորման, մշակման գործընթացը հնարավորինս ընթանում է լեզվական նշանների սահմաններում: Սրա արդյունքում տեղի է ունենում լեզվանշանային համակարգի ընդլայնում կամ հնչույթ-հնչյունային, կամ եղած նշանների իմաստային-բովանդակային պլաններում: Ֆիզիկական գոյությունը որևէ նյութի ասուն է տալիս տպավորման-պատկերացման տեղաշարժերի արդյունքում, իսկ զգացող գոյությունը, քանի որ արդեն եղածի վերլուծության «պատասխանատուն» է, փորձում է ձանաչել նյութեղենից աննյութի վերածվածը: Եթե լեզվական նշանի կառուցվածքը ներկայացնող պարզագույն կառույց ընդունենք եռանկյունը,

ՀԻՄՆԱՔԱՐԵՐ



2 (ժԲ) փարի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014

ապա նշված գործընթացը պետք է հասկանալ այսպես. ֆիզիկական գոյությունը ձանաչում է **առարկան** (առաջանում է հասկացությունը) ու անվանում դա (ստացվում է **բառը**), իսկ զգացող գոյությունը փորձում է ձանաչել եղած **հասկացությունը** ու անվանել դա: Այսինքն՝ վերջին դեպքում ոչ թե եռանկյուն, այլ ուղիղ գիծ է ստացվում, որի ելման կետը **հասկացությունն** է, իսկ հանգման կետը՝ **անվանումը**.



Հասկացությունն ամեն դեպքում աննյութ է, անշոշափելի՝ մի դեպքում իր նյութեղեն նախատիպն ունեցող, մյուս դեպքում՝ առանց դրա: Եթե նյութեղեն նախատիպ ունեցող հասկացությունը ծնվում է ֆիզիկական գոյության ընկալման արդյունքում՝ որպես ինքնաբերական գործընթաց, ապա երկրորդ դեպքում հասկացությունն առաջանում է որպես արդյունք զգացող գոյության ձանաչողության: Ցանկացած հասկացություն ունի էություն: Եթե տվյալ հասկացությունը արտաքին աշխարհում իր նյութական նախատիպն ունի, ապա ինքը տվյալ նյութեղեն հատվածի էության արտացոլումն է, իսկ եթե հասկացությունը չունի արտաքին նյութեղեն նախատիպ, ապա ինքը միաժամանակ ն էություն է, ն այդ էության արտացոլանքը: Հասկանալի է, որ «միայն իրենք՝ հասկացությունները կարող են ցույց տալ, թե ինչ են թաքցնում և ինչին են խոչընդոտում»<sup>6</sup>:

Տեսնում ենք, որ արտաքին նյութական աշխարհը իր էության աննյութ համայնապատկերն է ստեղծում մարդու մեջ, իսկ այդ էությունը իր հերթին նույնպես էություն է ներառում, որ միտված է ձանաչվելու, բացահայտվելու մտածող գոյության՝ մտավոր մարդու շնորհիվ: Այսինքն՝ այն,

6 Адорно Т. Негативная диалектика. М., 2003, с. 57.

ՎԷՆ համահայկական հանդես

ինչ ընկալվել է արտաքին աշխարհից, մտավոր գործունեությունը փորձում է վերլուծել, իմաստավորել, օգտագործել: Իսկ այն, ինչ առաջանում է միանգամից որպես էություն, մնում է զգացող գոյության սահմաններում, որի շնորհիվ մարդը զգում է: Այդ էությունը նույնպես կարող է վերլուծվել, իմաստավորվել, բայց այն անփոփոխ կերպով երբեք չի օգտագործվում. այդպիսի էությունների շնորհիվ ձևավորվում է մի բան, որ սովոր ենք «հոգի» կոչել: Եթե որևէ այդպիսի էություն օգտագործվում է մարդու կառուցողական գործունեության մեջ, ապա այն դադարում է լինել զգացող գոյության մաս՝ անցնելով բանական դաշտ:

Բանական դաշտ կարող են մտնել միայն այն էությունները, որոնք լեզվականորեն անվանված են: Եվ երբ ասում ենք, որ մարդկային գիտակցությունը ձևավորվում և ձևակերպվում է լեզվի շնորհիվ, փաստորեն նկատի ենք ունենում հենց այս անցումները. երբ որևէ հասկացություն այնքան ճանաչելի ու հասկանալի է մարդու համար, որ արդեն պատրաստ է մասնակցել կառուցողական գործունեությանը: Մարդը պետք է հստակ կարողանա անվանել, որպեսզի կարողանա հաղորդակցվել: Մտավոր գոյությունը հարստանում է մի կողմից՝ զգացող, մյուս կողմից՝ ֆիզիկական գոյությունների միջոցով: Առաջին դեպքում գործ ունենք, այսպես ասած, ինքնագիտակցության, իսկ երկրորդ դեպքում՝ աշխարհն ուղղակիորեն ընկալելու գործընթացի հետ: Որքան խիտ են զգացող էության մեջ առաջացած, բայց չօգտագործված էությունները, այնքան ամուր, լավ զարգացած է զգացող գոյությունը, և այդպիսի մարդուն ասում են «զգայուն», որքան խիտ է մտավոր գոյություն անցած էությունների բազմությունը, այնքան ամուր է գիտակցությունը, և այդպիսի մարդը կոչվում է «մտածող»: Մարդու մարդկային որակը կախված է նրա գործունեությունից<sup>7</sup>, որն իր հերթին կախված է մարդու զգացող կամ մտածող գոյություններից:

Անդրադառնանք լեզվանշանային համակարգի ընդլայնմանը՝ կապված զգալու և մտածելու հաջորդական գործընթացների հետ: Փաստորեն նոր ճանաչվող նյութը իր միանշանակ անունն է ստանում՝ այդպիսով, ասենք, մի նոր բառ ավելացնելով լեզվում. նյութի ֆիզիկական, արտաքին աշխարհում տեղի ունեցող տեսանելի, շոշափելի փոփոխությունները հնարավոր է արտահայտել արդեն եղած նշանների միջոցով՝ բառակապակցություն, նախադասություն, տեքստ, իսկ հասկացությունները, որոնց ինչպես գոյությունը, այնպես էլ փոփոխությունները նյութական չեն, ճանաչման գործընթացում կարող են կան ստանալ պարզապես նոր իմաստ, որ տարբեր է իր նյութական գոյության մատչելի իմաստից (դա պետք է հասկանալ երկու իմաստով. երբ մեկ արմատը որևէ նոր իմաստ է ստանում, և երբ բառակազմական որևէ եղանակով նոր բառ է ստացվում արդեն եղած ձևայիններից), կան դարձյալ անվանվել՝ այս անգամ որևէ անհոդաբաշխ, դեռ չեղած նշանով:

Բայց ի՞նչ է հասկացության ճանաչումը: Հասկացության ճանաչումը ոչ այլ ինչ է, եթե ոչ էությունից էություն անցում՝ էության էության հնարավոր բացահայտում կամ բացահայտման փորձ: Հասկացության ճանաչումով զգացող գոյությունը ինքնըստինքյան հայտնվում է արտաքին, իրային,

7 Տե՛ս Գեղեյ Գ. Феноменология духа // Сочинение. М., 1959, Т. 4, с. 172.

նյութական աշխարհում: Սակայն նրա և արտաքին աշխարհի հարաբերությունը բավական բարդ է: Այդ բարդությունը թերևս պայմանավորված է նրանով, որ այս դեպքում գործ ունենք մարդու ներքին աննյութ աշխարհի նյութեղենացման, այսինքն՝ դրա ու նյութեղեն աշխարհի աննյութ բնության միջև կապի բացահայտման հետ: Սա յուրատեսակ ճանաչողություն է, որի արդյունքում մարդը ճանաչում է իր ներքինը՝ հասկացությունների աշխարհը: Ճանաչողության բազմազանության շտրիկվ է, որ բարձրանում է մարդու արժեքը՝ որպես մարդու, այսինքն՝ ոչ թե գիտելիքի պարզունակ ամբարում ու նպատակադրված կառուցում, այլ ներքուստ ընդլայնում ու հարստացում<sup>8</sup>:

Բույեատն կամ թվացյալ հարատև իր ցանկացած զգացումին մարդը փորձում է անուն տալ: Այսինքն՝ մարդն աշխատում է նյութեղենացնել նույնիսկ իր մեջ ունեցած ոչ նյութեղենը: Սա նույնիսկ մի տեսակ պարտադիր ու մեխանիկորեն սկսվող փնտրտուք է, քանի որ իրեն տրված նյութեղեն աշխարհում մարդու ֆիզիկական գոյության համար հենց զգայական ու մտածող ոլորտները «հաջորդական ու անհրաժեշտ աստիճաններ կամ փուլեր են»<sup>9</sup>: Այս ճանապարհին որևէ լուծում չգտնելը զգացող գոյությանը ստիպում է պարզապես հարմարվել արտաքին նյութեղեն աշխարհին:

Ասում ենք՝ զգացող գոյությունը առաջանում է ֆիզիկականի մեջ ու նրանից հետո: Սակայն պետք է նկատել նաև, որ զգացող գոյությունն ինքն էլ ընդունակ է ընդլայնվելու, զարգանալու: Զգացող գոյության ընդլայնումն ու զարգացումն են, որ կասկածի տակ են դնում՝ արդյո՞ք լեզվանշանի նշանակյալը միայն արտաքին շոշափելի աշխարհի նյութն է: Եթե լեզուն մարդու ճանաչողական գործընթացի արդյունքում որպես արտաքին շոշափելի աշխարհի ձևակերպում նշանակում է իրը և անվանում հասկացությունը, ապա զգացող գոյության պարագայում լեզվի և նշանակյալը, և անվանյալը մեկն է՝ հասկացությունը: Ընդ որում այս դեպքում հարցն ավելի բարդ է, որովհետև որպես նշանակյալ փաստորեն հանդես է գալիս ոչ նյութեղեն մի բան, որ երբեմն չի անցնում զգացված լինելու սահմանը. չի դառնում գիտակցված, որոշակիացած: Նշանակիչի ու նշանակյալի կապի վերաբերյալ վեճերը այստեղ ժամանակավորապես հաշտվում են: Եթե ընդունենք, որ հասկացությունը նյութականորեն գոյություն ունեցող առարկայի էությունն է, իսկ հասկացությանը տրվող անվանումը՝ այդ հասկացության էությունը, ապա նշանակիչի ու նշանակյալի վեճն անտեղի է պարզապես, որովհետև էությունը չի կարող լինել պայմանական կամ պատճառաբանված:

Հարելով լեզվական նշանի պատճառաբանվածության տեսակետին և մերժելով դրա պայմանական լինելը՝ ստիպված պետք է լինենք ապացուցել, որ առանց բացառության բոլոր լեզվական նշանակիչները միանգամայն կապված են իրենց նշանակյալներին: Բանն այն է, որ լեզվական նշանը պատճառաբանված է այն դեպքում, երբ նկատի ունենք մարդու ֆիզիկական գոյության և արտաքին նյութական աշխարհի ճանաչման անվանման գործընթացը, իսկ եթե հարցը քննում ենք՝ նկատի առնելով

8 Տե՛ս **Фромм Э.** *Иметь или быть?* М., 1986, с. 44.

9 **Ананьев Б.** *Психология чувственного познания.* М., 1960, с.10.

մարդու զգացող գոյության և աննյութ ներքին աշխարհի ճանաչողական-անվանողական գործընթացը, ապա արժե հաշվի նստել նաև լեզվական նշանի պայմանականության հետ:

Արտաքին շոշափելի աշխարհի նշանակիչի ու նշանակյալի միջև ընկած է առնվազն մեկ կապող օղակ՝ զգայարաններից ստացվող տպավորության պատկերը կամ հասկացությունը: Իսկ մարդու ներքին աննյութ աշխարհը կարող է նշանակվել երկու ձևով: Առաջին դեպքում այդ անվանումն արդեն եղած որևէ այլ նշանակյալի նշանակիչ է, մյուս դեպքում որպես անվանում է հանդես գալիս ոչ լեզվական որևէ նշանակիչ: Առաջին դեպքում այդ անվանումը դառնում է հարմարեցված, հետևաբար նաև պայմանական, քանի որ ոչ թե հենց տվյալ նշանակյալին է, այլ մեկ այլ նշանակյալից վերցված: Ասենք՝ որևէ բուռն ապրում, զգացում, որ դժվար է անվանել, մարդը փորձում է իր իմացած անվանումների միջոցով նշել ու փոխանցել, եթե ուզում է փոխանցել: Այդպես է սովորաբար բացասականից մինչև դրական ցանկացած ապրումի դեպքում: Ընդ որում կան ապրումներ, որ ընդհանուր առմամբ բնորոշ են բոլոր մարդկանց, և կան ապրումներ, որ եզակի են: Իհարկե, ցանկացած ապրում խիստ անհատական է, և այդ ապրումի ընդամենը երևույթն է ընդհանուր բոլորի համար: Սա համեմատելի է լեզվական ոլորտի օբյեկտիվացման գործընթացի հետ, սակայն երկկողմանի ընթացքով: Այսպես, եթե լեզվական անհատական սուբյեկտիվ լեզվոլորտը հարաբերականորեն օբյեկտիվանում է ժողովրդական և, ի վերջո, համամարդկային սուբյեկտի միջոցով<sup>10</sup>, ապա զգացող գոյության դեպքում սուբյեկտիվ անհատական ցանկացած հասկացություն նախ դուրս է գալիս անհատի սահմաններից, միանում համամարդկային զգացող գոյությանը և դարձյալ վերադառնում անհատին՝ այդպես էլ մնալով սուբյեկտիվ:

Բոլոր մարդիկ ատում են ինչ-որ բան, բոլոր մարդիկ սիրում են ինչ-որ բան: «Ատել»-ը ընդհանուր բայ է բոլոր մարդկանց համար, «սիրել»-ը նույնպես ընդհանուր բայ է բոլորի համար: Ընդ որում՝ այդ բայերը որպես իմաստներ համամարդկային սուբյեկտիվ իրողություններ են, իսկ տարբեր լեզուների մեջ՝ առանձին ժողովուրդների սուբյեկտիվ իրողություններ: Սակայն դրանց դրսևորումները, ուժգնությունը տարբեր են, անհատական. նախ՝ կախված տվյալ անհատի բնությունից, ապա նաև՝ նրանից, ինչին ուղղված է տվյալ զգացումը: Միոտ ամենաբուռն տեսակը, դրսևորումը մի անհատի զգացող գոյության մեջ մեկ այլ անհատի զգացող, ֆիզիկական ու մտածող գոյություններից առաջացած հասկացությունն է, որի համընդհանուր, ընդունված անվանումը «սեր» բառն է: Այդ բառը՝ որպես համընդհանուր անվանում, միանգամայն պատճառաբանված է, սակայն եթե այն պետք է անվանի անհատական ապրումը, այդ հասկացության անհատական դրսևորումը, պայմանականանում է, հարմարեցվում է տվյալ անհատի ապրումին, նրա մեջ առաջացած հասկացությանը, նախ՝ այն պատճառով, որ անհատն ուզում է հասկանալի լինել, ապա այն պատճառով, որ ինքը՝ տվյալ անհատը, անգոր է ճշգրիտ, պատճառա-

<sup>10</sup> Տե՛ս Աթայան Է., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Եր., 1981, էջ 17:

բանված անվանում գտնել: Եթե հասկացությունն այլևս չի փոփոխվում, մնում է հասկանալի, մտածելի, ապա դա անվանելն առանձնապես դժվար չէ, բայց եթե հասկացությունն անընդհատ փոփոխվում է, ընդ որում աճում՝ հետզհետե խորանալով որպես էություն, ապա մարդու բոլոր գոյությունների համար դժվար է այն անվանել: Փաստորեն զգացող գոյության մեջ առաջացած և արտաքին նյութական որևէ հիմք չունեցող հասկացությունը՝ որպես վերացական, համամարդկային՝ ամենաընդհանուր լեզվաշխարհի միավոր, ունի պատճառաբանված անուն, որովհետև ցանկացած իրողության անուն անմիջականորեն կապված է այդ իրողության էության հետ, իսկ նույն հասկացությունը՝ որպես անհատական զգացող գոյության մաս, ստիպված է պայմանականորեն անվանվել: Ինչ-որ մեկը կարող է ամենաբուռն կերպով սիրել կամատել, այնպես, որ այդ զգացումն անվանող հնչյունախումբը նեղ, չնչին թվա. պատահական չէ, որ յուրաքանչյուր սիրողի թվում է, թե իր մեջ կա այնպիսի զգացմունք, որ աշխարհում ուրիշ ոչ ոք չի ունեցել, ու այդ զգացմունքը արդեն եղած բառերով հնարավոր չէ արտահայտել, և պատահական չէ, որ միայն սիրելու դեպքում են բառերը պակասում. «Մերը այն զգացումն է, որ ընդունակ է միայն աճելու»<sup>11</sup>: Բառերի բացակայության դեպքում մարդը երկու ելք ունի՝ կամ դիմել ընդունված, բայց պայմանական նշանակիչին, կամ որևէ պատճառաբանված նշանակիչ գտնել:

Մի կողմից՝ այդպիսի նշանակիչ հնարավոր է գտնել լեզվի ու ոչ լեզվի սահմանագծին, մյուս կողմից՝ լեզվից դուրս:

Յուրաքանչյուր հնչյուն նախ լեզվից դուրս իրողություն է, հետո՝ լեզվական: Ցանկացած հնչյուն, որ որոշակի ամրագրված իմաստից զուրկ է, կոչվում է անհողաբաշխ ու մնում լեզվից դուրս: Եթե տվյալ թեկուզ անհողաբաշխ հնչյունը գոնե մեկ ակնթարթ իմաստավորվում է, միտում ունի վերածվելու լեզվական միավորի: Ասենք՝ որևէ պահի որպես ապրումի անուն զգացող գոյությունը հնչյուն է արձակում: Զգացող գոյության ունեցած հասկացությունների գրեթե բոլոր պատճառաբանված անվանումները լեզուն տեղավորում է, օրինակ՝ «ձայնարկություն» խոսքի մասի մեջ: Սա գուցե բնական գործընթաց է բոլոր այն դեպքերի համար, երբ զգացող գոյությունն ընդամենը հույզ է ապրում: Հույզն անհամեմատ հեշտությամբ է անվանվում, ընդ որում լեզվանշանով, քան բուռն ապրումը, որ ինքը էություն է, աննյութ, անշոշափելի: Ուրեմն որքան խորն է հասկացության էությունը, այնքան բարդ է այն անվանելը:

Այս ամենի հիման վրա կարելի է ասել, որ երևույթի էության ճանաչելիության, վերլուծելիության աստիճանն է որոշում՝ արդյոք տվյալ էության նշանակիչը պատճառաբանված է, թե պայմանական: Որքան անհասկանալի ու անվերլուծելի է էությունը, այնքան մեծ է հավանականությունը, որ դրա նշանակիչը պայմանական բնույթ է ունենալու: Որքան էլ տարօրինակ է, բայց, օրինակ, զգացող գոյության հիմնարար էությունը՝ սիրո զգացումը, կախված խորությունից, կարող է ունենալ միևնույն նշանակիչը՝ մերթ պատճառաբանված, մերթ պայմանական: Պատճառաբանված է, երբ զգացող գոյությունը փորձում է անվանել իր և արտաքին

<sup>11</sup> Атаян Э. Душа и ее отображения. Ер., 2012, с. 197.

ՀԻՄՆԱԲԱՐԵՐ  
2 (ՃԲ) ԳՐԱԻԻ, ԹԻՎ 1 (45) ԽՈՒՄԲԱՐՄԱՐԻ, 2014  
ՎԷՎ ԽԱՄԱՆԱԿՎԱԿԱՆ ԽԱՆՈՒՆ

որևէ շոշափելի գոյության ընդամենը հարաբերությունը և տպավորությունը, իսկ երբ պետք է անվանվի զգացող գոյության մեջ անընդհատ զարգացող որևէ էություն, որ է՝ աճող զգացում կամ զգացմունք, արդեն դրան տրվող անվանումը պայմանական բնույթ է ստանում: Մարդն անհամեմատ հեշտ է ասում, որ սիրում է որևէ միրգ, բայց ամենայն դժվարությամբ կարող է «սիրել» բայով անվանել այն աճող զգացումը, որ իր մեջ առաջանում է մեկ այլ իր նմանի համար և հանդեպ: Եվ նույնն էլ հակառակ դեպքում. մարդը շատ հեշտ կարող է ասել, որ ստում է անձրևը, բայց արդյո՞ք նույնքան հեշտ կարող է նույն բայով անվանել, ասենք՝ իր նմանի հանդեպ ունեցած մեծագույն հակակրանքը: Երբ զգացող գոյության կամ հոգեբանական մարդու ճանաչողությունը ինչ-ինչ պատճառներով փորձում է մնալ լեզվանշանային սահմաններում, այդ ժամանակ տեղի է ունենում լեզվանշանային համակարգի ընդլայնում իմաստային առումով: Արդեն եղած որևէ այլ նշանակիչ առաքելություն է ստանում նշել մեկ այլ իրողություն նույնպես, այսինքն՝ վերաիմաստավորվում է կամ բազմիմաստ է դառնում:

Ներքին, հոգեբանական աշխարհի կամ զգացող գոյության մեջ առաջացող հասկացությունները ամեն անհատի համար նույնքան իրական ու տեսանելի են, որքան իրեն ակամա տրված արտաքին աշխարհը: Այդ հասկացությունների բազմությունը մարդու ներաշխարհն է, որի և արտաքին աշխարհի միջև տարբերությունը ոչ թե «ընդամենը այն է, որ մարդու ուղեղը պատրանքներ է ստեղծում»<sup>12</sup>, այլ այն, որ մարդու մեջ եղած աշխարհը պարզապես շոշափելի չէ և որքան զարգանում, աճում, այնքան ավելի հեռանում է ընկալելի լինելուց: Ինչպես վերը բերված երկու ծայրահեղ զգացումների դեպքում, այնպես էլ ցանկացած այլ զգացման, որ անընդհատ աճ է ապրում, անհատը փաստորեն հեռանում է այն վերացական, համընդհանուր հասկացությունից, որ բնորոշ է բոլոր մարդկանց: Այսպիսով այդ հասկացությունն ընդամենը որպես հիմք է մնում անհատական նույնատիպ ապրումի, զգացումի համար: «Սիրել» բայի հիմքում ընկած է զուտ դուր գալուց առաջացող տպավորությունը կամ, այլ կերպ ասած՝ «ընդհանուր գնահատականի հիմքում ընդհանուր հատկանիշն է ընկած»<sup>13</sup>:

**Ի մի բերելով վերը շարադրվածը՝** գալիս ենք այն եզրակացության, որ ցանկացած խոր զգացում, ապրում, որի ծննդյան ու գոյության միակ միջավայրը մարդու զգացող գոյությունն է, միայն լեզվանշաններով անվանվելու դեպքում ունենում է պայմանական նշանակիչ: Այն անվանելու ընդունակ միակ պատճառաբանված նշանակիչը լեզվից դուրս է: Այդ ոչ լեզվական միակ համապարփակ նշանը **լռությունն է**, որի շնորհիվ հնարավոր է անվանել ամեն ինչ՝ սկսած նվազագույն տպավորությունից մինչև գերագույն ապրում, աճող զգացում: Լռությունը միակ նշանն է, որով հնարավոր է հաղորդակցվել՝ բացառելով սխալ նշանակիչ ընտրած լինելու վտանգը: Լռությունն այս դեպքում նման է **սպիտակ գույնին**, որ կարծես թե ոչ մի գույն չունի, բայց բոլոր գույները սկսվում են սպիտակից և վերջանում են սպիտակ գույնի մեջ:

12 Фрит К. Мозг и душа. М., 2010, с. 39.

13 Арутюнова Н. Язык и мир человека. М., 1990, с. 200.



Ներքուստ կարգավորվող մարդկային ներաշխարհը երբեմն ինքնիրեն է գտնում իր մեջ տեղի ունեցող փոփոխությունների ոչ միայն անվանումը, այլ նաև անվանելու կամ չանվանելու իրավունքը. ոչ ոք ընդունակ չէ գիտակցաբար կարգավորելու, փոփոխելու իր զգացող գոյության միջավայրը: Մարդը երբեմն նույնիսկ անգոր է լեզվական նշանային հսկայական համակարգում գտնելու իր զգացող գոյությանը տվյալ պահին անհրաժեշտ նշանակիչը և ստիպված է դուրս գալ լեզվի սահմաններից՝ հաճախ դիմելով լեզվական առանց բացառության բոլոր նշանակիչների ոչ լեզվական միակ համընդհանուր հոմանիշին՝ լռությանը:

**Լռությունը միակ նշանն է, որ հնարավոր է գործածել որպես ասելիքի արտահայտություն ու որպես պատասխան՝ երկու դեպքում էլ համոզված լինելով, որ սխալվելու հավանականությունը գրեթե զրոյանում է:**

**Սիրանուշ Գ. Հովհաննիսյան** - ատենախոսության թեման է «Տեքստը էլեկտրոնային հաղորդակցման մեջ»: Ունի հրատարակված հոդվածներ՝ «Բառը որպես ձև և բովանդակություն», «Լեզվի ծագման առեղծվածը»: Մասնակցել է ԵՊՀ-ում կայացած «Նիցեշեն մշակույթի համատեքստում» 3-րդ միջազգային գիտաժողովին «Բարոյականությունը որպես մշակույթի նախադրյալ» զեկույցով: Զբաղվում է լեզվափոխության, հոգելեզվաբանական, լեզվանշանագիտական հարցերով:

## Summary

### THE LINGUISTIC SIGN AND ITS EXTRALINGUISTIC SYNONYM

Siranush G. Hovhannisyanyan

The article focuses on the connection between the objective reality, inner world of a person and linguistic system of signs. It presents how a person starts to recognize the real world, how a sensual world comes into existence in a person. Accordingly, we differentiate three types of human existence – perceptual, intellectual and physical. It is shown how the outer world is reflected in the inner world of a person and how it is designated. It is underlined that the part of a person's existence which becomes complete due to perceptual existence is mainly designated by means of nonlinguistic signs. A linguistic sign is conditional when it has the mission of naming a big and continually growing feeling. Such an emotional experience may be designated also by a motivated sign, which will not be a linguistic sign any more. All the linguistic signs have only one nonlinguistic synonym – silence. Thus, we can conclude that on the one hand the continuously growing feeling can be estranged by adjusting to the corresponding linguistic sign and on the other hand it can be estranged by the one and only nonlinguistic synonym – silence. In the last case the appointer of the linguistic segment being estranged is quite reasonable.

В статье рассмотрена связь между объективной реальностью, внутренним миром человека и системой языковых знаков. Показано, как человек познает реальный мир, как внутри человека образуется чувственный мир. Есть, соответственно, три вида человеческой сущности – физическая, мыслящая и чувствующая. Представлено, как внешний мир отображается внутри человека и как происходит его именование. Подчеркивается, что отображенное является частью внутреннего мира человека, который становится завершенным благодаря чувствующей сущности и именуется в основном неязыковыми знаками.

Языковой знак обретает произвольность, когда он имеет целью обозначить непрерывно растущее, огромное переживание или чувство. Такое переживание или чувство может именоваться также и мотивированным знаком, но этот знак уже не будет языковым. Для всех языковых знаков существует один общий неязыковой синоним – молчание. Выходит, что непрерывно растущее переживание может быть отчуждено, с одной стороны, соответствующим языковым знаком и с другой – его единственным неязыковым синонимом – молчанием. Фактически, отчуждение языкового сегмента в последнем случае, безусловно, мотивировано.